ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«14» 07 2023 թ.
№ ՊՇՆԿ/2-927

«ՉՀԳ» ԲԲԸ-ի (ՀՎՀՀ 02800056)
տնօրեն՝ Ա. Հարությունյանին
հասցե՝ ՀՀ, ք. Չարենցավան, Եսայան 2
հեռ.+37422642797
էլ. հասցե՝ info@cmtm.am

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՉՀԳ» ԲԲԸ-ի միջև 13.05.2022թ. կնքված N ՄԱԱՊՁԲ-22-4-7 գնման պայմանագրի (համաձայնագիր №1 առ 17.06.2022թ.) (այսուհետև՝ Պայմանագիր) և ՀՀ Կառավարության 16.03.2023թ. №345-Ա որոշման պահանջների շրջանակներում Ձեր ընկերությունը ոչ ուշ, քան 2023թ. հունվարի 30-ը, պետք է մատակարարեր Պայմանագրի 1-ին չափաբաժնով նախատեսված 4 հատ ապրանքներից՝ 2 հատ, 2-րդ չափաբաժնով նախատեսված 4 հատ ապրանքներից՝ 1 հատ, իսկ 3-րդ չափաբաժնով նախատեսված 4 հատ ապրանքները ամբողջությամբ: Սակայն 15.05.2023թ. դրությամբ «ՉՀԳ» ԲԲԸ-ի կողմից վերոնշյալ քանակները ընդհանրապես չեն մատակարարվել, որի արդյունքում Պայմանագիրը այդ չափաբաժինների մասով 2023թ. հունիսի 07-ին լուծվել էր, իսկ մյուս քանակների մասով՝ Պայմանագրի 1-ին չափաբաժնով նախատեսված 2 հատ և 2-րդ չափաբաժնով նախատեսված 3 հատ ապրանքները պետք է մատակարարեր ոչ ուշ, քան 2023թ. հունիսի 30-ը: Սակայն 11.07.2023թ. դրությամբ «ՉՀԳ» ԲԲԸ-ի կողմից վերոնշյալ քանակները ընդհանրապես չեն մատակարարվել:

Ուստի հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի)՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2023թ. հուլիսի 14-ին Պայմանագրի 1-ին և 2-րդ չափաբաժինները այդ մասով ևս լուծել է:

Տեղեկացնում եմ, որ «ՉՀԳ» ԲԲ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 2 325 885 ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, որը հաշվարկված է մինչև 10.07.2023թ. ներառյալ, իսկ հատկացված կանխավճարի մնացորդը՝ 387 647 500 ՀՀ դրամը, փոխանցել 900005570115 հաշվեհամարին:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am